



Գայանե ՏԱՇՅԱՆ

«Գործարար վարչարարություն»
կրթական ծրագրի առաջին
կուրսի մագիստրանտ,
կառավարման ֆակուլտետ,
ՀՊՏՀ



<https://orcid.org/0009-0007-6957-9355>

ԹՎԱՅԻՆ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.

ՕՐԵՆՍԴԻՐԱԿԱՆ ԲԱՅԵՐ ԵՎ ԿԻՔԵՌԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

DOI: 10.52174/2579-2989_2025.4-28

Հիմնաբառեր. թվային վճարային համակարգեր, օրենսդրական դաշտ, կիրքեռան-վրանգություն, ֆինանսական համակարգի կայունություն

Ժամանակակից տնտեսություններում թվային վճարային համակարգերն առանցքային դեր ունեն ֆինանսական միջավայրի կայունության ապահովման գործում: Ու թեև Հայաստանը վերջին տարիներին ակտիվ ջանքեր է գործադրում թվային վճարային համակարգերի զարգացման ուղղությամբ, ոլորտային և օրենսդրական բազմաթիվ խնդիրներ դեռևս սպասում են իրենց լուծմանը:

Հոդվածում քննարկվում են ՀՀ թվային վճարային համակարգերի օրենսդրական դաշտին և կիրքեռանվրանգությանն առնչվող բացթողումները՝ ներառելով միջազգային փորձի հետազոտություն և ոլորտի բարելավմանն ուղղված առաջարկություններ:

Ժամանակակից աշխարհում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության մեթոդների զարգացումը թվային հեղաշրջում է կատարել տնտեսության մեջ, այդ թվում՝ ֆինանսական ոլորտում՝ վերափոխելով կազմակերպությունների ներգրավվածության ձևը բիզնես գործընթացներում: Կազմակերպությունները գործում են բարձր մրցակցային միջավայրում, որտեղ հաջողության հասնելու համար անհրաժեշտ է ապահովել թվային վճարումների պարզ, արագ և անվտանգ մեթոդներ:

Վճարման ավանդական թղթային տարբերակներն աստիճանաբար իրենց տեղը զիջում են էլեկտրոնային վճարումներին: Տնային տնտեսությունները, կազմակերպությունները, բանկերն ու կառավարությունները վճարային գործարքներն առավելապես իրականացնում են էլեկտրոնային եղանակով: Վերջին տարիներին էլեկտրոնային եղանակով կատարվող վճարումների ծավա-

ները կտրուկ կերպով աճել են՝ վերափոխելով համաշխարհային ֆինանսական միջավայրը: Արդյունքում ձևավորվում է թվային վճարային համակարգերի նոր միջավայր, որը միջարքմարտահրավերներ է առաջացնում կազմակերպությունների, բանկերի և կառավարությունների համար՝ միաժամանակ հավասարակշռելով սպառողների և քաղաքացիների շահերը:

ՀՀ-ում թվային վճարումներին անցում կատարելը տեխնոլոգիական հրամայական է, որն արտացոլվում է «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքում և այլ իրավական փաստաթղթերում, ինչպես նաև Հայաստանի թվայնացման 2021-2025 թթ. ռազմավարությունում, որը նպատակ ունի պետական կառավարման և մասնավոր ոլորտներում թվային զարգացման նախաձեռնությունների իրականացմամբ ապահովելու թվային տնտեսության առաջընթաց: Ոլորտը կարգավորվում է «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով¹, որը ամրագրում է ԿԲ իրավասությունները վճարահաշվարկային համակարգի հսկողության ուղղությամբ, ինչն էլ ԿԲ կարևորագույն խնդիրներից մեկն է:

Վերոհիշյալ օրենքը տալիս է վճարահաշվարկային համակարգի սահմանում, ըստ որի՝ վճարահաշվարկային համակարգը վճարային գործիքների, ընդհանուր կանոնների, ընթացակարգերի և տեխնիկական ու ծրագրային միջոցների ամբողջությունն է՝ քլիրինգի, դրամական միջոցների փոխանցման և վերջնահաշվարկների իրականացման համար, որի միջոցով ապահովվում է վճարումը շահառուին²: Սույն օրենքն ուժեղ իրավական հիմք է ապահովում ոլորտի կարգավորման առումով և ՀՀ ԿԲ-ին տրամադրում որոշակի լիազորություններ՝ իր առջև դրված խնդիրները լուծելու համար:

Այսպիսով՝ թվային վճարային համակարգերը ժամանակակից տնտեսության հիմնարար կառուցվածքային բաղադրիչներից են, որոնք օգտագործվում են անհատների, ձեռնարկությունների և պետա-

կան կառավարման մարմինների միջև՝ վճարային գործարքների իրականացման համար:

Պայմանավորված վերոնշյալ արդիականությամբ՝ Հայաստանում իրականացվում են բարելավման որոշակի աշխատանքներ այս ուղղությամբ՝ շեշտադրելով ՀՀ ԿԲ-ի կողմից թվային վճարումների համակարգի զարգացման քաղաքականության մշակման ու դրա իրագործման ապահովման կարևորությունը: Բացի այդ, երկրում գործում են վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպություններ, որոնցից առավել նշանավորներն են «Արմենիան քարդ» ՓԲԸ-ն, «Թել-Սել» ԲԲԸ-ն, «ԻՋԻ ՓԵՅ», «ԻԴԻԱՄ», «ՖԱՍԹ ՇԻՖԹ» ՍՊԸ-ները, որոնց թվում առկա են նաև էլեկտրոնային փողեր թողարկող կազմակերպություններ:

Ժամանակակից թվային տնտեսության զարգացումն առաջ է բերում նոր պահանջներ ֆինանսական ծառայությունների նկատմամբ: Չնայած ոլորտում տարվող ակտիվ աշխատանքներին՝ հանրապետության թվային վճարային համակարգերի կառավարման բնագավառում առկա են մի շարք խնդիրներ, որոնց լուծումն առաջնահերթ է համակարգի արդյունավետ և անխափան աշխատանքի, հետևաբար նաև ազգային տնտեսության զարգացման համար: Իրավական դաշտի անորոշությունները և կիբեռանտվանգության ապահովմանն առնչվող հարցերը շարունակում են մնալ արդիական և պահանջում հետևողական քայլեր ոլորտի զարգացումը խթանելու նպատակով:

Վերլուծություն

ՀՀ-ում վճարահաշվարկային համակարգերը կարգավորում ու վերահսկում է ՀՀ ԿԲ-ն: Գործող իրավական դաշտում առաջնային են «Վճարահաշվարկային համակարգերի և վճարային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքը: Վերջիններս վճարահաշվարկային համակարգի մասնակիցների գործունեության կանոնա-

¹ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=165017> (հղումը կատարվել է 16.07.2025)

² <https://www.arlis.am/documentview.aspx?docid=165017> (հղումը կատարվել է 16.07.2025)

կարգման հիմքն են: «Վճարահաշվարկային համակարգերի և վճարային կազմակերպությունների մասին» օրենքը սահմանում է վճարային համակարգերի ընդհանուր կարգավորող միջավայրը՝ ներկայացնելով վճարային կազմակերպությունների գործունեության կարգը, նրանց նկատմամբ պատասխանատվության միջոցները, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողական գործառույթը³: Սակայն սույն օրենքը չի անդրադառնում համակարգերի կիբեռանվտանգությանը:

Կարևոր նշանակություն ունի հատկապես ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը կարգավորում է քաղիրավական հարաբերությունները, ներառյալ ֆինանսական, բանկային, վճարահաշվարկային բնագավառները: Քաղաքացիական օրենսգրքի 51-րդ գլխում ուրվագծված են կանխիկ և անկանխիկ հաշվարկների հասկացություններն ու ձևերը: 2024 թ. հոկտեմբերի 24-ին քաղաքացիական օրենսգրքում կատարվել են լրացումներ կրիպտոակտիվների մասին (հոդված 143.1)⁴՝ ներառելով դրանք քաղաքացիական իրավունքի օբյեկտների կազմում⁴, սակայն դրանց շահառուների հարաբերությունների օրենսդրական կարգավորումը դեռևս բացակայում է:

«Վճարման հանձնարարականով դրամական միջոցների փոխանցման մասին» ՀՀ օրենքը կարգավորում է դրամական միջոցների էլեկտրոնային և թղթային եղանակներով փոխանցումների գործընթացը, ներգրավված կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև պարտավորությունները չկատարելու դեպքում նրանց պատասխանատվության կարգը⁵:

ՀՀ վճարային համակարգի օրենսդրական դաշտի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ օրենքները կարգավորում են ֆինանսական հաստատությունների գործունեությունը՝ միտված լինելով նվազեցնելու համակարգային ծախսերի

դիսկը, խրախուսելու թվային գործարքների կնքումը (այդ թվում՝ QR կոդերով վճարում, էլեկտրոնային առևտուր (e-commerce), բջջային բանկինգ, էլեկտրոնային դրամապանակներ և այլն), ինչպես նաև պաշտպանելու հաճախորդների տվյալները:

Գրեթե բոլոր պետություններում ԿԲ դերը, որպես վճարահաշվարկային համակարգի կարգավորող և վերահսկող մարմին, կարևորագույնն է: Վճարահաշվարկային համակարգերի միջազգային փորձի ուսումնասիրությունը թույլ է տալիս բացահայտել տարբեր երկրներում կիրառվող վճարային համակարգերի մոտեցումները, դրանց առանձնահատկությունները և լավագույն փորձի տեղայնացման հնարավորությունները ՀՀ-ում՝ թվային վճարային համակարգերի բարելավման և ֆինանսական ներգրավվածության մակարդակի բարձրացման նպատակով:

Միջազգային կանոնակարգերից ամենահայտնին, թերևս, ԵՄ վճարային ծառայությունների հրահանգն է (PSD2 - Payment Services Directive), որն ընդունվել է 2015 թ. և սահմանում է ԵՄ-ում վճարումների կանոնները՝ շեշտը դնելով բաց բանկային գործունեության վրա: Այսինքն՝ ֆինանսական տվյալներն անվտանգ և ապահով կերպով փոխանակվում են բանկերի և երրորդ կողմի ծառայություններ մատուցողների միջև: 2023 թ. առաջարկվել է PSD3 հրահանգը՝ ուժեղացնելով խարդախության դեմ պայքարի միջոցները: PSD3-ը նախատեսում է նաև վճարումների մատչելիություն նույնականացման մեթոդների միջոցով այն օգտատերերի համար, որոնք չունեն սմարթֆոններ⁶: ՀՀ օրենսդրական դաշտում բացակայում են բաց բանկային համակարգին վերաբերող դրույթները և իրավական ակտերը, չնայած այն հանգամանքին, որ ՀՀ ԿԲ-ն դեռևս 2021 թ. բաց բանկային համակարգի ներդրումը համարել է ֆինանսական համակարգի ռազմավարական առաջնահերթու-

³ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=165017> (հղումը կատարվել է 16.07.2025)

⁴ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=199820> (հղումը կատարվել է 16.07.2025)

⁵ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=373> (հղումը կատարվել է 16.07.2025)

⁶ Payment services: revised rules to improve consumer protection and competition in electronic payments, European Commission, Brussels, 2023.

թյուն⁷:

ԵՄ՝ եվրոյով վճարումների միասնական տարածքը (SEPA) թույլ է տալիս կատարել եվրոյով անկանխիկ անդրսահմանային գործարքներ SEPA երկրների տարածքում՝ արագ, անվտանգ և ծախսարդյունավետ եղանակով⁸: Դա միջազգային թվային վճարումները դարձնում է նույնքան հեշտ, որքան ներքին վճարումները: Այս համակարգը թույլ է տալիս կատարել ուղղակի դեբետային վճարումներ այլ երկրներում, օգտագործել սեփական հայրենական հաշիվը՝ այլ երկրում փոխանցումներ կատարելու կամ ստանալու համար, իրականացնել վարկային փոխանցումներ: Հայաստանում կարող է ներդրվել SEPA-ի նմանությամբ վճարային մոդել՝ ԵԱՏՄ երկրների հետ անդրսահմանային վճարումները հեշտացնելու համար:

ԱՄՆ-ում վճարային համակարգերի կարգավորող միջավայրն ապակենտրոնացված է տարբեր գերատեսչությունների միջև: Ֆինանսական և վճարային հաստատությունները վերահսկվում են կամ նահանգային, կամ դաշնային մակարդակով՝ մեկ կամ մի քանի գործակալությունների կողմից⁹: Ի տարբերություն ԱՄՆ-ի վճարային համակարգի, ՀՀ վճարային համակարգն ավելի կենտրոնացված է, որտեղ գերիշխում է ԿԲ դերը: Ինչ վերաբերում է բաց բանկային գործունեությանը, 2023 թ. հոկտեմբերին սպառողների ֆինանսական պաշտպանության բյուրոն (CFPB) առաջարկեց կանոն՝ խթանելով բաց բանկային գործունեությունը: Սա նշանակում է, որ երրորդ կողմի մատակարարների հավելվածների միջոցով հաճախորդները կարող են համեմատել տարբեր բանկերի առաջարկներն ու տոկոսադրույքները, իրականացնել գործարքներ, վճարումներ, կառավարել իրենց ծախսերը:

Այսպիսով՝ տարբեր երկրներում գոյություն ունեն թվային վճարային համակարգերի կարգավորման տարբեր եղանակներ, որոնք միտված են թվային վճարումների պարզությանը՝ միաժամանակ պահ-

պանելով անվտանգությունը:

Վճարային կազմակերպությունների տեղեկատվական անվտանգությունն ապահովում է ISO/IEC 27001 «Տեղեկատվական անվտանգություն, կիբեռանվտանգություն և գաղտնիություն: Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգեր: Պահանջներ» ստանդարտը, որը տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգի մշակման համապարփակ ուղեցույց է գործունեության բոլոր ոլորտների կազմակերպությունների համար: Հայաստանում տեղեկատվական անվտանգության ապահովման հիմնական սկզբունքները սահմանվում են ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 173-Ն որոշմամբ՝ «Տեղեկատվական անվտանգության ապահովման նվազագույն պահանջների սահմանման վերաբերյալ կարգով», որը տարածվում է ֆինանսական կազմակերպությունների վրա՝ ըստ ISO/IEC 27001:2005 ստանդարտի: Ի տարբերություն 2022 թ. թարմացված տարբերակի, այստեղ բացակայում են կիբեռանվտանգության ապահովման նվազագույն պահանջները և արտաքին աուդիտի իրականացման անհրաժեշտությունը:

Այս ամենը վկայում է այն մասին, որ թվային վճարային համակարգերի անվտանգությունը պահանջում է ոչ միայն տեխնիկական, այլև քաղաքական և իրավական մոտեցումներ: Անհրաժեշտ է մշակել համապարփակ քաղաքականություն՝ համադրելով օրենսդրական կարգավորումների միջազգային փորձը և ազգային առանձնահատկությունները:

Ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Հայաստանում թվային վճարային համակարգերի ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտում առկա են որոշակի բացեր, որոնք խոչընդոտում են ոլորտի արդյունավետ զարգացումը: Նախ՝ օրենքները չեն ներառում հստակ կանոնակարգեր ֆինանսական տեխնոլոգիաների (ֆինտեխ), այդ թվում՝ կրիպտոարժույթների կարգավորման մասին: Ֆինտեխի կարգավորման «ավազատուփի»

⁷ ՀՀ ԿԲ ռազմավարություն 2021, էջ 7, <https://www.cba.am/AM/panalyticalmaterialsresearches/Strategy%202021.pdf> (հղումը կատարվել է 16.07.2025):

⁸ <https://www.ecb.europa.eu/paym/integration/retail/sepa/html/index.en.html> (հղումը կատարվել է 16.07.2025):

ներդրումը ՀՀ ԿԲ-ի կողմից նշանակալի ձեռքբերում կհամարվի: ՀՀ ԿԲ 2021 թ. ռազմավարության ակնկալվող արդյունքների շարքում է փոխակերպող բիզնես մոդելներով ֆինտեխ ընկերությունների շուկայի հասանելիության հնարավոր կառուցակարգերի մշակումը՝ կարգավորման «ավազատուփի» (regulatory sandbox) միջոցով: Այնուամենայնիվ, «Կրիպտոակտիվների մասին» ՀՀ օրենքի նախագիծը ձայների 96% մեծամասնությամբ մերժվել է 2024 թ.:

Ի տարբերություն PSD3-ի, ՀՀ-ում բաց բանկային համակարգի վերաբերյալ իրավական կարգավորումները բացակայում են՝ հետին պլան մղելով նորարարությունները և արդյունավետ գործունեությունը: Ինչ վերաբերում է կիբեռանվտանգությանը, թեև անվտանգության ընդհանուր կառուցակարգեր գործում են, այնուամենայնիվ, բացակայում են նույնականացման կամ գաղտնագրման վերաբերյալ ստանդարտները, որոնց ներդրումն էլ ավելի արժանահավատ կդարձնի համակարգի գործունեությունը: Հատկանշական է, որ այս ուղղությամբ կատարվում են աշխատանքներ, և 2023 թ. դեկտեմբերի 19-ին ՀՀ ԲՏԱՆ-ում հանրային քննարկման է դրվել «Կիբեռանվտանգության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որն ուղղված է կիբեռանվտանգությունների դեմ արդյունավետ պայքարի կառուցակարգերի մշակմանը և կիբեռանվտանգ միջավայրի ստեղծմանը: Թեև նախագիծը ձայների 62% մեծամասնությամբ հավանության է արժանացել, այնուամենայնիվ ունի թույլ հստակություն և թերություններ, մասնավորապես՝ օրենքը չի տարանջատում կրիտիկական ենթակառուցվածքի օպերատորներին և թվային ծառայություններ մատուցողներին, չի հստակեցնում տեղեկատվության փոխանակման ուղիները:

Եզրակացություն

Այսպիսով՝ թվային վճարային համակարգերի արդիականացումը տնտեսության թվայնացման կարևորագույն բաղադրատարրերից է: Դա ներառում է նաև օրենսդրական հստակ հիմքերի առկա-

յություն և վճարահաշվարկային հարաբերությունների իրավական կարգավորում: ՀՀ-ում վճարահաշվարկային համակարգերի գործունեությունը և վճարահաշվարկային հարաբերությունները կարգավորվում են մի քանի օրենքների և օրենսդրական ակտերի միջոցով, որոնցում առկա են որոշակի բացեր և թերացումներ: Վերջիններիս լուծումը պահանջում է ժամանակակից մոտեցումների և կառուցակարգերի մշակում: Մասնավորապես՝ օրենսդրական կարգավորումը չի անդրադառնում կրիպտոակտիվների շահառուների և ֆինտեխ ընկերությունների հարաբերությունների կարգավորմանը, այդ թվում՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված, բռնագրավված կրիպտոակտիվների շահագործմանը, վճարահաշվարկային համակարգերի կիբեռանվտանգության ապահովմանը, ինչպես նաև նույնականացման և գաղտնագրման հստակ գործակարգերին: Ֆինանսական առողջ միջավայր ստեղծելու համար անհրաժեշտ է ձևավորել կայուն և մրցունակ վճարահաշվարկային համակարգ՝ նախ և առաջ հստակեցնելով օրենսդրական դաշտը: Գործող իրավական դաշտի առկայությունը բավարար չէ վճարային համակարգերի արդյունավետ գործունեության և դրանց կառավարման հիմնախնդիրների լուծման համար, եթե օրենքներն ու օրենսդրական ակտերը մատչելի չեն դրանց շահառուներին և չեն ներառում ամբողջ ոլորտի կարգավորումը:

Շարունակելով կարգավորող միջավայրի վերլուծությունը՝ պարզվեց, որ Հայաստանում տեղեկատվական անվտանգության կարգավորման համար ընդունված թիվ 173-Ն որոշումը հիմնված է ISO/IEC 27001:2005 ստանդարտի հին տարբերակի վրա, մինչդեռ ստանդարտի թարմացված տարբերակը ներառում է կիբեռանվտանգության ապահովման վերաբերյալ հստակ դրույթներ: Այսինքն՝ թեև թարմացված տարբերակի առկայությանը, Հայաստանում դեռևս կիրառվում է հին ստանդարտը:

Հետազոտության ընթացքում ուսումնա-

⁸ Աղբյուրը՝ Social Progress Index, Social Progress Imperative, <https://www.socialprogress.org/social-progress-index>

սիրվել և վերլուծվել են տարբեր երկրների թվային վճարային հարաբերությունների կարգավորման կանոնակարգերը և միջազգային ստանդարտները: Առանձնահատուկ ուշադրության է արժանացել երկրների կողմից բաց բանկային համակարգի ներդրման գործընթացը՝ համապատասխան կանոնակարգերի ընդունմամբ: Արձանագրվել են Մեծ Բրիտանիայի ֆինանսական և տնտեսական համակարգերի հաջողությունները՝ բաց բանկային համակարգի ընդունումից հետո: Վերջինիս ներդրումը խթանում է ոլորտում մրցակցության և թափանցիկության մակարդակի բարձրացումը, նորարարությունների կիրառումը, ֆինանսական տվյալների ապահով փոխանակումն ու առհասարակ թվային վճարային համակարգերի արդիականացումը: ԵՄ-ում բաց բանկային համակարգի մասին դրույթներն արձանագրված են PSD2/PSD3 ստանդարտներում: Ի տարբերություն այն երկրների, որոնք ներդրել են բաց բանկային համակարգը, Հայաստանն այդ առումով դեռևս չունի կարգավորող միջավայր:

Թվային վճարային համակարգերի զարգացման համատեքստում իրենց առանձնահատուկ տեղն ունեն միջազգային փոխանցումային համակարգերը: Միջազգային փորձի դիտարկումն ուշագրավ էր ԵՄ-ում եվրոյով վճարումների միասնական տարածքի (SEPA) վերաբերյալ համապարփակ տեղեկատվության ուսումնասիրության տեսանկյունից: Վերջինս միասնական տարածքի մասնակից երկրներին հնարավորություն է տալիս ավելի արագ ու անվտանգ կերպով կատարելու վճարումները: Օտարերկրյա մոդելների համադրական դիտարկումը թույլ է տալիս Հայաստանում նմանատիպ մոդելի մշակման առաջարկներ ներկայացնել: Միջազգային փոխանցումային համակարգերի համատեքստում քննարկվել է նաև PayPal թվային վճարային համակարգի ոչ լիարժեք գործարկելիության խնդիրը՝ Հայաստանում դրամական փոխանցումների ստացման առումով: Սա դժվարացնում է միջազգային ֆինանսական ինտեգրման աշխատանքները:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ օրենս-

դրական բացթողումները շտկելու համար առաջարկվում են հետևյալ բարեփոխումները.

- PSD3 ստանդարտի հիման վրա մշակել տեղական օրենսդրական կարգավորումների շրջանակ՝ ուսումնասիրելով բաց բանկային համակարգի ներդրման հնարավորությունը Հայաստանում և դա հարմարեցնելով տեղական կարիքներին: Այդպիսով՝ կխրախուսվեն մրցակցությունն ու նորարարությունը վճարային ծառայություններ մատուցողների միջև: Նշված նախաձեռնության շրջանակում, կատարելով իրազեկման աշխատանքներ, ձեռք բերել նաև հաճախորդների համաձայնությունը՝ պահպանելով նրանց վստահությունը վճարահաշվարկային համակարգի նկատմամբ: Հաշվի առնելով «Կրիպտոակտիվների մասին» օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկությունները՝ ընդունել դրա փոփոխված տարբերակը կամ մշակել նոր օրենք՝ ավելացնելով առգրավված կրիպտոակտիվների օրինական կիրառման մասին հստակ դրույթներ կամ ներառել հոդվածներ սույն օրենքում՝ ֆինտեխ ընկերությունների իրավական դաշտի կարգավորման համար, ստեղծել ֆինտեխ ընկերությունների գործունեության կարգավորման «ավագատուփ»՝ ԿԲ վերահսկողությամբ՝ վճարային նոր տեխնոլոգիաների փորձարկման և սպառողների ավելի լայն շրջանակ ներգրավելու նպատակով:

- «Ավագատուփի» ներդրումը ձևավորում է կրիպտոակտիվների կարգավորման նոր քաղաքականություն, որը պետք է իրականացվի ըստ կառավարման աստիճանակարգության՝ վերևից ներքև, և ոչ հակառակը: Ներկայումս կրիպտոակտիվները կարգավորվում են ներքևից՝ շահառուների կողմից, մինչդեռ պետությունը պետք է հստակ կանոնակարգեր սահմանի դրանց անվտանգ շրջանառության համար: Այս համատեքստում հարկ է ուսումնասիրել և գնահատել ԿԲ-ի կողմից թվային արժույթի (CBDC)՝ որպես կրիպտոակտիվի օրինական տարատեսակի և վճարամիջոցի ներդրման հնարավորությունները, ինչպես նաև ծախսարդյունավետությունը:

• Միջազգային առումով, համապատասխան կանոնակարգերը շարունակաբար թարմացվում են՝ հաշվի առնելով շուկայի ընթացիկ միտումները և զարգացման տեմպերը: Ուստի առաջարկվում է պարբերաբար վերանայել և թարմացնել հայրենական օրենսդրական շրջանակը, լրամշակել «Կիբեռանվտանգության մասին» օրենքի նախագիծը՝ հստակեցնելով առկա հասկացություններն ու դրույթները: Հատկապես կիբեռանվտանգության համակարգերի ամրապնդման նպատակով պետք է վերանայել թիվ 173-Ն որոշումը՝ ըստ միջազգային ISO/IEC 27001 ստանդարտի թարմացված տարբերակի: Տեղեկատվության անվտանգության և կիբեռանվտանգության ապահովման համար անհրաժեշտ է ուժեղացնել ոլորտի վերահսկողությունը, ընդունել տվյալների պահպանման և փոխանցման խիստ պահանջներ՝ այդպիսով նվազեցնելով նաև տեխնոլոգիական նորամուծությունների խոցելիությունը: Խարդախությունների և անվտանգությանը սպառնացող ռիսկերի կանխման նպատակով, հետևապես՝ ֆինանսական ոլորտի և վճարային կազմակերպությունների կարգավորման համար անհրաժեշտ է անցնել մոդուլային

կառավարման՝ ստեղծելով ՀՏՀ-ին կից ենթակառույց՝ Fin-CERT՝ տեղեկատվական անվտանգության արձագանքման կենտրոն ֆինանսական շուկայի մասնակիցների համար, որը կվերահսկվի ԿԲ-ի կողմից: Սա հնարավորություն կտա արագ կերպով արձագանքելու ֆինանսական հատվածում առաջացող կիբեռսպառնալիքներին և նվազագույնի հասցնելու ֆինանսական, այդ թվում՝ վճարահաշվարկային կազմակերպությունների ռիսկերը:

Որպես ամփոփում՝ ՀՀ-ում թվային վճարային ոլորտի զարգացումը պահանջում է համապարփակ մոտեցում՝ օրենսդրական բացերը լրացնելու և կիբեռանվտանգության պահանջները կատարելագործելու միջոցով: Վճարահաշվարկային համակարգի զարգացման և Հայաստանի ֆինանսական կայունության ապահովման նպատակով ՀՀ ԿԲ-ն պետք է ուժեղացնի ոլորտի վերահսկողությունը՝ շարունակաբար իրականացնելով դրա կարգավորմանն ուղղված բարեփոխումներ: Այս ամենի համադրումը թույլ կտա վճարահաշվարկային հարաբերությունների ոլորտում ընդունել կառավարչական արդյունավետ որոշումներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, ընդունվել է 2004 թվականի նոյեմբերի 24-ին՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=165017>
2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, ընդունվել է 1998 թվականի մայիսի 5-ին՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=199820>
3. «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, ընդունվել է 1996 թվականի դեկտեմբերի 4-ին՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=373>
4. «Կրիպտոնակտիվների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, քննարկվել է 2024 թվականի մայիսի 30-ից հունիսի 15-ը, <https://www.e-draft.am/projects/7292/about>
5. «Կիբեռանվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, քննարկվել է 2023 թվականի դեկտեմբերի 19-ից մինչև 2024 թվականի հունվարի 4-ը, <https://www.e-draft.am/projects/6656/about>
6. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ռազմավարություն», հաստատվել է ՀՀ ԿԲ խորհրդում՝ 2021 թվականի նոյեմբերի 23-ին, <https://www.cba.am/AM/panalyticalmaterialsresearches/Strategy%202021.pdf>
7. Payment services: revised rules to improve consumer protection and competition in electronic payments, European Commission, Brussels, 2023, 9 pages.

8. Cooper C., Perkins D., Labonte M., US Payment System Policy Issue, CRS, 2019, 23 pages.
9. <https://www.ecb.europa.eu/paym/integration/retail/sepa/html/index.en.html>
10. <https://www.consumerfinance.gov/about-us/newsroom/cfpb-proposes-rule-to-jumpstart-competition-and-accelerate-shift-to-open-banking/>

Гаяне ТАШЯН

Магистрант первого курса образовательной программы "Бизнес администрирование", факультета менеджмента, АГЭУ

ФИНАНСОВАЯ СИСТЕМА

РАЗВИТИЕ ЦИФРОВЫХ ПЛАТЁЖНЫХ СИСТЕМ В АРМЕНИИ: ЗАКОНОДАТЕЛЬНЫЕ ПРОБЕЛЫ И ПРОБЛЕМЫ КИБЕРБЕЗОПАСНОСТИ

В современных экономиках цифровые платёжные системы играют ключевую роль в обеспечении стабильности финансовой среды. Хотя Армения в последние годы прилагает активные усилия для развития цифровых платёжных систем, многочисленные отраслевые и законодательные проблемы остаются ещё нерешёнными.

В статье рассматриваются законодательные пробелы и недостатки, связанные с кибербезопасностью цифровых платёжных систем Республики Армения, включая анализ международного опыта и рекомендации по совершенствованию сферы.

Ключевые слова: *цифровые платёжные системы, законодательная база, кибербезопасность, стабильность финансовой системы*

Gayane TASHYAN

First-year Master's student at the "Business Administration" Master's program, Faculty of Management, ASUE

FINANCIAL SYSTEM

DEVELOPMENT OF DIGITAL PAYMENT SYSTEMS IN ARMENIA: LEGISLATIVE GAPS AND CYBERSECURITY ISSUES

In modern economies, digital payment systems play a crucial role in ensuring the stability of the financial environment. Although Armenia has made significant efforts in recent years to advance its digital payment infrastructure, numerous sectoral and legislative issues remain unresolved.

The paper examines the legislative gaps and cybersecurity-related shortcomings in the digital payment ecosystem of the Republic of Armenia, incorporating an analysis of international practices and offering recommendations for improving the sector.

Keywords: *digital payment systems, legislative framework, cybersecurity, financial system stability*